

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐԹՈՒՐ ԶԱԽՈՅԱՆ* 

Երևանի պետական համալսարան

Հոդվածում հետազոտվել են փորձագետի և նրա կարգավիճակի ծագումնաբանությունը, պատմական զարգացումը միջնադարից մինչև մեր օրերը՝ նկատի ունենալով, որ բոլոր ժամանակներում էլ հանցագործությունների կանխման, բացահայտման ու քննության գործընթացում էական դեր են խաղացել փորձագետները, որոնց օժանդակությամբ վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն է ստացել ձեռք բերելու ապացույցներ, բացահայտելու գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ: Այդ նպատակով ուսումնասիրվել են Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը, Դավիթ Ալավկա Որդու «Կանոնական օրենսդրությունը», Եղիազար Գրիգորյանի, Գրիգոր Կանաչանյանի և Հովհաննեսի որդի Սարգիսի «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց»-ը, Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ Փառաց»-ը: Ուսումնասիրվել, վերլուծվել և ամփոփ ներկայացվել են նաև փորձագետի կարգավիճակի վերաբերյալ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀԽՍՀ քրեական դատավարության և 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգավորումները, մասնագետի և փորձագետի գործունեության հիմնական նպատակների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները: Հայաստանի իրավական հուշարձանների ուսումնասիրությունների արդյունքում փաստվում է, որ միջնադարում ևս հանցագործությունների քննության գործում դատարանները մեծ դեր են հատկացրել փորձագետներին՝ «փորձառու», «գործին վարպետ» անձանց և նրանց կողմից կիրառվող գիտելիքներին:

Բանալի բառեր – գիտություն, տեխնիկա, գիտակ, փորձառու, իրազեկ, մասնագետ, փորձագետ, կարգավիճակ, Դատաստանագիրք, հատուկ գիտելիք, ունակություն

* **Արթուր Զախոյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Артур Чахоян – кандидат юридических наук, доцент кафедры уголовно-процессуального права и криминалистики ЕГУ

Artur Chakhoyan – Candidate of Law, Associate Professor at YSU Chair of Criminal Justice and Criminalistics of YSU

Էլ. փոստ՝ arturchakhoyan@ysu.am, ORCID: <https://orcid.org/0000-0001-5315-946X>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 12.11.2024

Գրախոսվել է՝ 11.12.2024

Հաստատվել է՝ 15.12.2024

© The Author(s) 2024

Ներածություն

Ակնհայտ է, որ հանցագործությունները, օգտագործելով գիտության և տեխնիկայի արդի նվաճումները, որոնք օրեցօր զարգանում և կատարելագործվում են, կարող են կատարվել մարդկային գործունեության ամենատարբեր բնագավառներում և ունենալ տարբեր հասարակական հարաբերություններ, հետևաբար դրանց քննության ու բացահայտման գործընթացում մեծ նշանակություն ունի գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի տարբեր բնագավառների նվաճումների վերաբերյալ իմացությունը, մինչդեռ վարույթն իրականացնող մարմինը օբյեկտիվորեն հնարավորություն չունի, բացի իրավաբանական գիտելիքներից, իմանալու կամ տիրապետելու նաև նշված բոլոր բնագավառների գիտական նվաճումներին:

Արդարացի կլինի այն պնդումը, որ հանցագործությունների քննության արդյունավետությունը սերտորեն կապված է իրավապահպան մարմինների գործունեության մեջ գիտության և տեխնիկայի ժամանակակից ձեռքբերումների օգտագործման հետ: Այս պայմաններում մեծանում է փորձագետների գործունեության նշանակությունը, ովքեր լրացնում են հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի գիտատեխնիկական հնարավորությունների բացերը՝ աջակցելով օբյեկտիվ իրականության բացահայտման գործընթացին:

Հետևաբար, հանցագործությունների կանխման, բացահայտման ու քննության գործում գիտատեխնիկական միջոցների և մեթոդների կիրառման երաշխիք են փորձագետները, ովքեր, օգտագործելով իրենց հատուկ գիտելիքները, վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն են տալիս ձեռք բերելու ապացույցներ, բացահայտելու գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ:

Փորձագետ (ռուսերեն՝ эксперт, экспериментатор, անգլերեն՝ expert, connoisseur, authority, adept) տերմինը, ըստ հայոց լեզվի բացատրական բառարանների, ունի հետևյալ իմաստային նշանակությունները՝

1. «փորձագիտանքի համար որևէ վիճելի՝ բարդ գործի պարզաբանման նպատակով հրավիրվող մասնագետ, էքսպերտ, 2. Գիտափորձ կատարող մասնագետ գիտնական»¹,

2. «մասնագետ, որին հրավիրում են մի բարդ՝ վիճելի գործ՝ հարց և այլն քննելու և եզրակացություն տալու համար, 2. Գիտական փորձեր կատարող՝ դնող մասնագետ»²,

3. «փորձառագետ, էքսպերտ, մասնագետ, որին հրավիրում են մի բարդ՝ վիճելի գործի մասին մասնագիտական եզրակացություն տալու համար»³:

Ինչպես տեսնում ենք, «փորձագետ» բառի իմաստային նշանակությունում

¹ Է. Բ. Ադայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան», 1976, էջ 1535:

² «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Եր., «Հայկական ՄՄՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն», 1969, էջ 677:

³ Ա. Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., «Երևանի պետական համալսարան», 2009, էջ 1177:

և բացատրությունում բոլոր դեպքերում էլ կարևորվել է գիտական փորձեր կատարելու ունակությունը կամ փորձառությունը: Իսկ փորձը կամ փորձառությունը կյանքից՝ գիտական գործունեությունից, գործնական գիտելիքներից քաղված հմտությունների և ունակությունների իմացություն են:

Իմացությունն էլ, մասնավորապես՝ գիտական, ուղղված է օբյեկտիվ իրականության արտացոլմանը և կարող է այն դարձնել ակտիվ, ստեղծագործ՝ կանխատեսելով հետագոտվող օբյեկտի հետագա զարգացման ընթացքը: Իմացության սուբյեկտը ստեղծագործաբար և նպատակաուղղված արտացոլում է իրականությունը և ստեղծում դրա իդեալական պատկերները: Այլ կերպ՝ իմացությունը մարդկային մտածողությունում օբյեկտիվ իրականության արտացոլումն ու վերարտադրումն է, փորձի կուտակումը, հնարքների և ունակությունների ձեռքբերումը: Մարդու իմացական գործունեության արդյունք կարող է լինել որոշակի գիտելիքը: Իսկ գիտելիքը անձի հասարակական, աշխատանքային և մտավոր գործունեության արդյունք է, որն արդեն հիմնված է փորձի, հմտության և ունակության վրա:

Միջնադարյան Հայաստանում ևս առանձին ուշադրության է արժանացել փորձագետը, իսկ ապացույցի տեսակ են սահմանվել նաև նրա տված եզրակացությունները, որոնք, մասնավորապես, կարևորվել են սպանվածների մահվան պատճառը որոշելու համար:

«Հայկական միջնադարյան իրավունքին հայտնի էին ապացույցների հետևյալ տեսակները՝ խոստովանությունը, վկաների ցուցմունքները, երդումը, գրավոր փաստաթղթերը, գիտակ անձանց եզրակացությունները»⁴:

Եվ պատահական չէ, որ հայ ժողովրդի պատմության տարբեր շրջաններում ստեղծված իրավական մտքի բոլոր հուշարձաններում ուղղակի կամ անուղղակի կարևորվել է հանցագործությունների քննության, դատավարությունների ժամանակ «իրագել» կամ «փորձառու» մարդկանց դերի, որոշակի հարցերի վերաբերյալ նրանց եզրակացությունների նշանակությունը:

Որպես ասվածի ապացույց՝ հարկ ենք համարում հիշատակել որոշ օրինակներ միջնադարյան իրավաբանական այնպիսի հանրահայտ հուշարձաններից, ինչպիսիք են Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի, Դավիթ Ալավկա Որդու աշխատությունները, որոնցում ևս կարևորվել է իրավախախտման փաստերի հաստատման գործընթացում փորձագետների դերը, քանի որ նշված ժամանակաշրջանում ևս դատավորները դիմել են «փորձառու» մարդկանց՝ փորձագետների օգնությանը:

Բացառիկ արժեքավոր է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը: Այն միջնադարյան իրավունքի գլուխգործոց է և առաջնակարգ տեղ է զբաղեցնում աշխարհի ճանաչված օրենսդրական հուշարձանների շարքում: Դատաստա-

⁴ Գ. Մ. Ղազինյան, Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Եր., 2001, էջ 24:

նագրքի նախաբանում կամ, ինչպես Գոշն է անվանում, «Նախադրություն դատաստանի գրվածքների» մասում նշվել է, որ դատավարությունների ժամանակ դատավորը պետք է իր հետ ունենա երկու կամ երեք փորձառու այր և հետո միայն վճիռ կայացնի, որպեսզի դատը լինի արդար, երկուսին կամ երեքին պետք է իր մոտ պահի ոչ միայն որպես վկա, այլ նաև նրանց միջոցով կրթվի և հմտանա մշտապես⁵:

Ինչպես տեսնում ենք, Մխիթար Գոշն իր ժամանակին հիշատակել է, որ դատավորի մասնագիտական գիտելիքները բավարար չեն արդար դատավճիռ կայացնելու համար, և, բացի մասնագիտական գիտելիքներից, նրան անհրաժեշտ են նաև հատուկ գիտելիքներ, իսկ այդ բացը հնարավոր է լրացնել որոշակի բնագավառներում հատուկ գիտելիքներ ունեցող անձանց՝ փորձագետների կամ, ինչպես Գոշն է հիշատակում, «փորձառու» մարդկանց միջոցով, ովքեր մշտապես պետք է գտնվեն դատավորի կողքին:

Հանցագործությունների բացահայտման գործընթացում փորձագետի և վերջինիս կողմից կիրառվող հատուկ գիտելիքների պատմության զարգացման համար բացառիկ արժեքավոր է նաև Դավիթ Ալավկա Որդու «Կանոնական օրենսդրությունը», որը թեև պետականորեն ընդունված չի եղել, սակայն լայնորեն կիրառվել է միջնադարյան Հայաստանում⁶: Նշված կանոնների 77-րդ և այլ հոդվածներում օգտագործվել են «գործին վարպետ անձ», «բժիշկ», «մանկաբարձ» հասկացությունները, իսկ գործերի քննության ժամանակ կարևորվել է նրանց մասնակցությունը:

Հայաստանում փորձագետի և նրա կողմից կիրառվող հատուկ գիտելիքների պատմության ուսումնասիրությունը անհնար է պատկերացնել առանց հասարակական-քաղաքական ականավոր գործիչ, իրավագետ-օրենսդիր, հմուտ դիվանագետ, պատմափիլիսոփայական փայլուն աշխատությունների հեղինակ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի:

Սմբատ Սպարապետը նշված աշխատության մի շարք հոդվածներում կարևորել է «գիտնական մարդկանց, ովքեր հմուտ էին իրենց գործի մեջ»⁷, նրանց մասնակցությունը գործերի քննությանը:

Քննարկվող հարցը հայ իրականությունում կարևորվել է նաև XVIII դարում, հայ իրավաբանական հուշարձաններից մեկում՝ «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց»-ում:

Աստրախանցի իրավագետներ Եղիազար Գրիգորյանի, Գրիգոր Կանաչանյանի և Հովհաննեսի որդի Սարգիսի «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց»-ը կայսրուհի Եկատերինա Երկրորդի՝ Ռուսական կայսրության հայերին

⁵ Տե՛ս **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք, Եր., 2001, էջեր 23-25:

⁶ Տե՛ս **Ռ. Հ. Ավագյան**, Հայ իրավական մտքի զանազան, գիրք 1-ին, Եր., 2001, էջ 180:

⁷ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1900, **Սմբատ Սպարապետ**, «Պատմություն», էջ 45:

ինքնավարություն տալու մասին հրամանից հետո դարձավ հայ իրավունքի եզակի հուշարձաններից մեկը:

Դատաստանագրքի ստեղծումը (աշխատանքներն սկսվել են 1747-1748 թթ., բայց այն կատարելապես ավարտվել է 1765 թվականին) մեծապես կապված էր 1746 թվականին Աստրախանում հայկական դատարանի հիմնման հետ:

Դատաստանագրքի բնագիրն առաջին անգամ գրաքար հայերենով գիտական շրջանառության մեջ դրել է Ֆ. Գ. Պողոսյանը՝ 1967 թվականին, Մատենադարանի հրատարակությամբ⁸:

Իրավունքի այս հուշարձանն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ հանցագործությունների քննության, ինչպես նաև քրեական և քաղաքացիական դատավարությունների ժամանակ անհրաժեշտություն է առաջացել գործին մասնակից դարձնելու իրազեկ անձանց՝ այս կամ այն փաստը հաստատելու կամ ժխտելու, հետազոտություններ կատարելու համար, ինչպես նաև առանձին գլուխ է նախատեսվել (Դատաստանագրքի առաջին մասի «ԺՁ» գլուխը) «Վճռահատության» մասին, որի 1-ին հոդվածով սահմանվել է. «Վճռահատ է կոչվում նա, ով իրավաբանների կամ դատավորների ընտրությամբ նշանակվում է իրազեկ լինելու և լուծում տալու տարաձայնություններին ... »:

Մինչև քննարկվող հարցի՝ 20-րդ դարի և արդի կարգավորումներին անցնելը կարևոր ենք համարում ներկայացնել նաև աշխարհում առաջին՝ ԱՄՆ Սահմանադրության ընդունումից դեռ 6 տարի առաջ՝ 1773 թվականին, Հնդկաստանի Մադրաս քաղաքում Շահամիր Շահամիրյանի կողմից ստեղծված Հայաստանի սահմանադրության նախագիծը՝ «Որոգայթ Փառաց»-ը, քանի որ այն, բացի անկախ հայկական պետության ձևի, կառուցվածքի, հասարակական-քաղաքական և այլ հարցերից, կարգավորել է նաև քրեական դատավարության որոշ հարցեր:

Նշված աշխատության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Շահամիր Շահամիրյանը դեռևս 1773 թվականին նախատեսել է գիտակ անձանց՝ մասնագետների կամ փորձագետների ինստիտուտը, առանձին հոդվածով պետությանը պարտավորեցրել է նրանց նկատմամբ առանձնակի հոգածություն ցուցաբերել, սահմանել նաև, թե ովքեր կարող են հանդես գալ որպես մասնագետներ կամ փորձագետներ, վերջիններիս կողմից որոշակի արհեստի տիրապետելու պարտականությունը և այլն:

Համաձայն «Որոգայթ Փառաց»-ի 127-րդ և 173-րդ գլուխների՝ «Հայաստանի պետությունն առանձնակի հոգատարություն է ցուցաբերում մասնագետների նկատմամբ, հատկապես. փիլիսոփայության, աստղաբաշխության, բժշկության, երաժշտության, ճարտասանության և այլն»: «Մասնագետը, քանի դեռ իր վարպետից ստորագրված վկայագիր չի ստացել, որով երաշխավորվում է, որ սա կատարյալ մասնագետ է, իրավունք չունի ինքնուրույն զբաղվել իր արհեստով»:

⁸ Տե՛ս Ֆ. Գ. Պողոսյան, Դատաստանագիրք Աստրախանի Հայոց, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1967:

Սահմանադրության նախագծով առանձին հանցագործությունների քննության ժամանակ պարտադիր է համարվել փորձագետների՝ գիտության տարբեր բնագավառներում հմտացած գիտակ անձանց պարտադիր մասնակցությունը, իսկ սպանությունների կամ հանկարծամահության դեպքերում, բացի գործը քննող անձից, գործի քննությանը պետք է պարտադիր մասնակցեր բժիշկը, որպեսզի հնարավոր լիներ պարզել մահվան պատճառը, կամ, ժամանակակից մասնագիտական լեզվով ասած, դին պարտադիր պետք է ենթարկվեր դատաբժշկական փորձաքննության: Այդ մասին է վկայում «Որոգայթ Փառաց»-ի գլուխ 273-ը, համաձայն որի՝ «Եթե տանը կամ փողոցում որևէ մեկը հանկարծակի մեռնի, ով որ այդ մարդու մահվան ժամին նրա մոտ գտնվի, լինի ընտանի թե օտար մարդ, պարտավոր է տեղում անշարժ մնալ և ահազանգել քաղաքի դատավորի դատաստանատուն, իսկ դատաստանից պարտավոր են ուղարկել դատավորներից մեկին ու մի բժշկի, որ գնան պարզեն մահվան պատճառը և վկայություն վերցնեն ննջեցյալի դիակի մոտ եղած մարդկանցից (այդ վկայությունը կարող է հրապարակավ լինել), ապա հրաման տան դիակը թաղելու»⁹:

Հռվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ եթե որևէ մեկը մահացել է, ապա դիակը պետք է մնար մինչև դատավորի և բժշկի դեպքի տեղ ժամանելը: Վերջինս հետազոտման միջոցով պետք է պարզեր մահվան պատճառը, և միայն դրանից հետո թույլատրում էին թաղել սպանվածին:

Փորձագետի, նրա իրավունքների ու պարտականությունների, փորձագետին բացարկելու հետ կապված յուրօրինակ քրեադատավարական կարգավորումներ նախատեսվեց 1961 թվականի մարտի 7-ին ընդունված և 1961 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ ՀԽՍՀ օրենսգրք):

Նշված օրենսգրքով «փորձագետ» հասկացությունը, փորձագետի իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում էին «Ապացույցների մասին» վերտառությամբ 6-րդ գլխով, իսկ փորձագետին բացարկելու հետ կապված քրեադատավարական հարցերը՝ «Նախաքննություն կատարելու ընդհանուր պայմանները» վերտառությամբ 12-րդ գլխով:

Որպես փորձագետ կարող էր հրավիրվել ամեն մի անձ, որը տիրապետում էր գիտության կամ տեխնիկայի, արվեստի կամ արհեստի հատուկ գիտելիքներին, իսկ փորձագետին առաջադրված հարցերը և նրա եզրակացությունը չէին կարող դուրս գալ փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից: Հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կամ դատարանի պահանջը փորձագետ հրավիրելու մասին պարտադիր էր այն ձեռնարկության, հիմնարկի կամ կազմակերպության ղեկավարի համար, որտեղ աշխատում էր փորձագետը: Վերջինս եզրակացությունը տալիս էր իր անունից, իր հատուկ

⁹ «Որոգայթ փառաց», խմբագիր Գառնիկ Սաֆարյան, Եր., 2002, էջ 159:

գիտելիքներին համապատասխան կատարած հետազոտությունների օբյեկտիվ ու բազմակողմանի գնահատության հիման վրա և իր տված եզրակացության համար անձնական պատասխանատվություն էր կրում: Փորձաքննություն կատարելու համար մի քանի փորձագետներ նշանակվելու դեպքում նրանք մինչև եզրակացություն տալը պետք է խորհրդակցեին միմյանց հետ: Եթե փորձագետները հանգում էին ընդհանուր եզրակացության, ապա եզրակացությունը պետք է ստորագրեին բոլորը: Իսկ փորձագետների միջև տարաձայնություն առաջանալիս յուրաքանչյուր փորձագետ իր եզրակացությունը պետք է կազմեր առանձին¹⁰:

Փորձագետը պարտավոր էր ներկայանալ հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի, դատարանի հրավերով և տալ իրեն առաջադրված հարցերի վերաբերյալ օբյեկտիվ եզրակացություն: Եթե առաջադրված հարցը դուրս էր գալիս փորձագետի հասուկ գիտելիքների սահմաններից, կամ նրան ներկայացված նյութերն անբավարար էին եզրակացություն տալու համար, պետք է կազմվեր եզրակացություն տալու անհնարինության մասին պատճառաբանված ակտ, և այն ուղարկվեր փորձաքննություն նշանակող մարմնին: Բացի նշված պարտականություններից, փորձագետն իրավունք ուներ ծանոթանալու գործի այն նյութերին, որոնք վերաբերում են փորձաքննության առարկային, միջնորդություններ հարուցելու՝ եզրակացություն տալու համար անհրաժեշտ լրացուցիչ նյութեր ստանալու նպատակով, հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվությամբ ներկագտնվելու հարցաքննությունների և այլ քննչական ու դատական գործողությունների կատարմանը և փորձաքննության առարկային վերաբերող հարցեր տալու հարցաքննվողներին¹¹:

Ինչպես արդեն նշեցինք, ՀԽՍՀ օրենսգրքով նախատեսված են եղել նաև փորձագետին բացարկելու հիմքերը և կարգը, մասնավորապես՝ փորձագետը չէր կարող մասնակցել գործով վարույթին, եթե՝

1. առկա է եղել ՀԽՍՀ օրենսգրքի 24-րդ հոդվածով («Գործի քննությանը դատավորի մասնակցության հնարավորությունը բացառող հանգամանքներ») նախատեսված հիմքերը,
2. փորձագետը մեղադրյալից, տուժողից, քաղաքացիական հայցվորից կամ քաղաքացիական պատասխանողից պաշտոնական կամ այլ կախման մեջ է գտնվել կամ գտնվում է,
3. փորձագետը տվյալ գործով ստուգում է կատարել կամ հավաքել է այլ նյութեր, որոնք հիմք են ծառայել քրեական գործ հարուցելու կամ քաղաքացիական հայց ներկայացնելու համար,
4. փորձագետը գործին մասնակցել է որպես մասնագետ, բացառությամբ

¹⁰ Տե՛ս ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված՝ 1961 թվականի մարտի 7-ին, հոդված 66:

¹¹ Տե՛ս նույն տեղը, հոդված 69:

դիակի արտաքին զննության գործում դատաբժշկական բնագավառի մասնագետ բժշկի մասնակցության դեպքերի,

5. այն դեպքում, երբ դրսևորվի նրա անձեռնհասությունը:

Նրա՝ որպես փորձագետի նախորդ մասնակցությունը գործին հիմք չի ծառայել բացարկման համար¹²:

Իսկ վերը մատնանշված հիմքերի առկայության դեպքում փորձագետին կարող էին բացարկ հայտնել դատախազը, կասկածյալը, մեղադրյալը, պաշտպանը, ինչպես նաև տուժողը և նրա ներկայացուցիչը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը կամ նրանց ներկայացուցիչները: Հետաքննություն կամ նախաքննություն կատարելիս փորձագետի բացարկման հարցը պետք է լուծեր հետաքննություն կատարող անձը, քննիչը կամ դատախազը, իսկ դատարանում՝ գործը քննող դատարանը¹³:

Փորձագետին բացարկելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ փորձագետը չէր կարող մասնակցել գործով վարույթին, եթե նա գործին մասնակցել է որպես մասնագետ, բացառությամբ դիակի արտաքին զննության գործում դատաբժշկական բնագավառի մասնագետ բժշկի մասնակցության դեպքերի:

ՀԽՍՀ օրենսգիրքը, բացի փորձագետից, քրեական գործերի քննությանը նախատեսել էր նաև մասնագետի մասնակցության հնարավորություն:

Այս կապակցությամբ Հ. Մ. Պիվազյանը գրել է. «Ռեսպուբլիկայի 1961 թ. Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է նաև մասնագետի մասնակցությունը քրեական դատավարությանը: Այս ինստիտուտը առաջին անգամ է իր օրենսդրական ձևակերպումը ստանում: Բայց, չնայած դրան լայն տարածում է գտել պրակտիկայում: Անթույլատրելի է մասնագետ հասկացության նույնացումը փորձագետ հասկացության հետ»¹⁴:

Մասնագետ (լատիներեն *specialis* (հատուկ)) ընդհանուր առմամբ նշանակում է գիտության կամ տեխնիկայի որևէ բնագավառի գիտելիքներին ու հմտություններին տիրապետող մարդ, որևէ բանի վարպետ, որևէ բանի մեջ հմուտ՝ վարժ մարդ¹⁵:

Հարկ է նշել, որ թեպետ օրենսգիրքը նախատեսել էր քննչական գործողությունների կատարմանը նաև մասնագետի մասնակցության հնարավորություն, վերջինիս համար սահմանել իրավունքներ ու պարտականություններ, նրան բացարկելու հիմքեր ու կարգ, սակայն չէր սահմանել, թե քրեական վարույթի ընթացքում ովքեր կարող էին հանդես գալ որպես մասնագետներ, և ինչ գիտելիքների պետք է տիրապետեին նրանք, միայն ընդհանուր ձևակերպումներից

¹² Տե՛ս նույն տեղը, հոդված 127:

¹³ Տե՛ս նույն տեղը, հոդված 126:

¹⁴ Հ. Մ. Պիվազյան, Փորձաքննությունը ըստ Հայկական ՍՍՌ քրեական դատավարության նոր օրենսգրքի, «Դատական փորձաքննության հարցեր», ժողովածու 1, Եր., 1962, էջ 45:

¹⁵ Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Դ-Ֆ, Եր., 1976, էջ 971:

կարելի էր ենթադրել, որ մասնագետները պետք է լինեին ձեռնհաս, գործի ելքով չշահագրգռված և ապացույցներ հայտնաբերելու, ամրապնդելու և առգրավելու գործում օժանդակելին քննիչին՝ օգտագործելով իրենց հատուկ գիտելիքներն ու հմտությունները¹⁶:

Այսինքն՝ եթե ընդունենք, որ մասնագետն էլ պետք է տիրապետեր հատուկ գիտելիքների, ստացվում է, որ, ի տարբերություն փորձագետի, ով պետք է տիրապետեր **գիտության կամ տեխնիկայի, արվեստի կամ արհեստի** հատուկ գիտելիքների, մասնագետը պետք է տիրապետեր նաև **հմտությունների**, թեև ՀԽՍՀ օրենսգիրքը չէր բացահայտում նաև մասնագետի հատուկ գիտելիքների ոլորտը կամ բնագավառը:

ՀԽՍՀ օրենսգրքով սահմանված՝ մասնագետին բացարկելու հիմքերն ու կարգը նույնն էին, ինչ փորձագետինը:

Մասնագետի գիտելիքների, իրավունքների ու պարտականությունների հստակ սահմանման, քննչական գործողություններին նրա մասնակցության կարգավորվածության առումով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված և 1999 թվականի հունվարի 12-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք), ի տարբերություն ՀԽՍՀ օրենսգրքի, որոշակի առաջընթաց է գրանցել:

Օրենսգրքի կարևոր առաջընթացներից կարելի է առանձնացնել այն, որ նախ «Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները» վերտառությամբ 6-րդ հոդվածի 32-րդ կետով սահմանվեց, որ մասնագետը և փորձագետը համարվում են քրեական դատավարությանը մասնակցող անձինք, ապա առանձին՝ «Քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք» վերտառությամբ 10-րդ գլխով հստակեցվեց ինչպես փորձագետի, այնպես էլ մասնագետի՝ որպես քրեական դատավարությանը մասնակցող անձանց կարգավիճակները, նրանցից պահանջվող գիտելիքների շեմը, իրավունքներն ու պարտականությունները: Բացի այդ, «Անձանց բացարկելը և նրանց ազատելը քրեական դատավարությանը մասնակցելուց» վերտառությամբ 11-րդ գլխով ընդլայնվեցին փորձագետին և մասնագետին բացարկելու հիմքերը, հստակեցվեց հայտնված բացարկի լուծման կարգը:

Համաձայն Օրենսգրքի կարգավորումների՝ փորձագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին որոշման համապատասխան նշանակում է փորձագիտական հաստատության ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր **հատուկ գիտելիքներն** օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար: Փորձագետը պետք է տիրապետի

¹⁶ Տե՛ս ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդվածներ 124¹, 126¹:

գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների: Ի տարբերություն ՀԽՍՀ օրենսգրքի կարգավորումների՝ Օրենսգրքով ընդլայնվեցին փորձագետի պարտականությունները, մասնավորապես՝ փորձագետը պարտավոր էր նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին և իրեն հրավիրած անձին ներկայացնել իր հատուկ որակավորումը հաստատող փաստաթղթերը, եզրակացություն տալ ոչ միայն առաջադրված հարցերով, այլ նաև իր իրավասության շրջանակների մեջ մտնող և փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով, ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով՝ դատավարության մասնակիցների հարցերին պատասխանելու, ինչպես նաև եզրակացության բովանդակությունը պարզաբանելու համար, քրեական վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ժամանակ տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և համապատասխան քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հետ հարաբերությունների մասին, քննչական կամ այլ դատավարական գործողությանը մասնակցելու դեպքում չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստերի դահլիճը՝ առանց նախագահողի թույլտվության, դատարանի նիստի ժամանակ պահպանել կարգուկանոն, առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դոնփակ դատական նիստի ժամանակ իրեն հայտնի դարձած տեղեկությունները¹⁷:

Օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝ մասնագետը քրեական գործով չշահագործված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմինը նշանակում է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ՝ գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառներում իր **մասնագիտական հմտությունները և գիտելիքներն** օգտագործելով աջակցելու քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելիս: Մասնագետը կարող է նշանակվել դատավարության մասնակցի առաջարկած անձանցից: Մասնագետը պետք է տիրապետեր բավարար մասնագիտական հմտությունների և գիտելիքների:

Ինչպես տեսնում ենք, Օրենսգիրքը հստակեցրել էր ինչպես փորձագետի, այնպես էլ մասնագետի համար պահանջվող գիտելիքների աստիճանը, և դրանք նույնական չէին: Եթե փորձագետը պետք է տիրապետեր գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի **բավարար հատուկ գիտելիքների**, ապա մասնագետը պետք է տիրապետեր գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառների **մասնագիտական հմտությունների և գիտելիքների**: Այլ կերպ ասած՝ մասնագետի համար կարևոր պայման չէր, և

¹⁷ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 1998 թվականի հուլիսի 1-ին, հոդված 85:

վերջինս կարող էր նաև չտիրապետել գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառների հատուկ գիտելիքների:

Փորձագետի և մասնագետի կարգավիճակի հաջորդ կարևոր առանձնահատկությունն այն էր, որ փորձագետը քրեական գործով վարույթին ներգրավվում էր գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու նպատակով, իսկ մասնագետը կարող էր ներգրավվել միայն քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելիս վարույթն իրականացնող մարմնին աջակցություն ցուցաբերելու համար:

Որպես տարբերություն կարելի է նշել նաև այն, որ համաձայն Օրենսգրքի 84-րդ հոդվածի՝ մասնագետի հայտնած կարծիքը չէր կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը, իսկ փորձագետը տալիս էր եզրակացություն, ինչն էլ ապացույցի ինքնուրույն տեսակ էր:

Վերը նշված հարցին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը և հայտնել հետևյալ իրավական դիրքորոշումը.

«...»

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փորձագետի և մասնագետի՝ որպես քրեական դատավարությանը մասնակցող անձանց կարգավիճակի և նրանց լիազորությունների առանձնահատկությունների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

«...»

15.1. Անդրադառնալով մասնագետի և փորձագետի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակներին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ և 85-րդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետը հատուկ գիտելիքներն օգտագործում է հետազոտություն կատարելու և դրա արդյունքում եզրակացություն տալու համար, իսկ մասնագետն իր մասնագիտական հմտություններով ու գիտելիքներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելիս: Հետևաբար՝ փորձաքննության արդյունքում փորձագետի կողմից կազմվող եզրակացությունը և մասնագետի կողմից տրվող կարծիքը նույնպես ունեն տարբեր իրավական բնույթ և նշանակություն:

«...»

Այսպիսով, փորձագետի եզրակացությունն իրենից ներկայացնում է գրավոր շարադրված հետևություններ, որտեղ փորձագետը հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարված հետազոտությունների հիման վրա պատասխանում է վարույթն իրականացնող մարմնի առաջադրած հարցերին:

16.1. Ինչ վերաբերում է մասնագետին, ապա վերջինս հետազոտություններ չի իրականացնում և եզրակացություն չի տալիս, այլ որևէ բնագավառում իր

ունեցած հմտություններով և գիտելիքներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին այս կամ այն քննչական կամ այլ դատավարական գործողությունը կատարելիս: Այլ խոսքով՝ վերջինիս կողմից տրվող կարծիքը ոչ թե հետազոտության արդյունք է, այլ կոնկրետ հարցի վերաբերյալ մասնագիտական գիտելիքների կամ փորձի վրա հիմնված դիրքորոշում: Ուստի պատահական չէ, որ օրենքով մասնագետի կարծիքը չի դիտվում որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, և այն չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը: Այն վարույթն իրականացնող մարմնի համար կարող է ունենալ ուղղորդող, խորհրդատվական նշանակություն»¹⁸:

Ինչպես փորձագետին, այնպես էլ մասնագետին բացարկելու հիմքերն ու կարգը գրեթե նույնն էին, բացառությամբ, որ փորձագետին բացարկելու հիմք էր նաև այն, որ վերջինս անցկացրել էր ստուգումներ կամ կատարել այլ ստուգողական գործողություններ, որոնց արդյունքները հիմք են ծառայել քրեական գործ հարուցելու համար: Նրանց հայտնած բացարկը լուծում էր քրեական վարույթն իրականացնող մարմինը: Բացարկման հիմքեր էին՝ եթե օրենքով կամ դատարանի դատավճռով անձն իրավունք չուներ լինելու փորձագետ կամ մասնագետ, եթե դատավորի հետ գտնվում էին ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ, եթե գտնվում էին կողմից, նրա օրինական ներկայացուցչից կամ ներկայացուցչից ծառայողական կախվածության մեջ, և եթե հայտնաբերվում էր նրանց անձեռնհասությունը:

Փորձագետի կարգավիճակի, նրա կողմից վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությամբ կատարվող վարության գործողությունների, վերջինիս իրավունքների և պարտականությունների առումով բոլորովին նոր մոտեցումներ և կարգավորումներ է սահմանել 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ինչը, մեր կարծիքով, առանձին և առավել խորքային ուսումնասիրության կարիք ունի:

Միայն պետք է նշել, որ գործող օրենսգրքով փորձագետին վերաբերող հիմնական նորամուծություններից մեկն այն է, որ վերջինս մեկտեղում է նաև մասնագետի գործառույթները: Թեև գործող քրեական դատավարության օրենսգիրքը հրաժարվել է մասնագետին ինքնուրույն սուբյեկտ համարելուց, նրա համար առանձին կարգավիճակ սահմանելուց, սակայն պահպանել է նրա միակ գործառույթը՝ ապացուցողական կամ վարության գործողությանը մասնակցելով վարույթն իրականացնող մարմնին օժանդակելը՝ այն վերապահելով փորձագետին¹⁹:

¹⁸ Արտեմ Արմենի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍՂ3/0226/01/14 որոշում:

¹⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եր., 2022, էջ 135:

Եզրակացություն: Հայաստանի պատմական տարբեր ժամանակաշրջաններում, ինչպես վկայեցին Հայաստանի իրավական հուշարձանների ուսումնասիրությունները, նույնիսկ միջնադարում, հանցագործությունների քննության գործում մեծ դեր է հատկացվել փորձագետներին՝ «փորձառու», «գործին վարպետ» անձանց և նրանց կողմից կիրառվող գիտելիքներին:

Ի տարբերություն 1961 թվականին ընդունված ՀԽՍՀ և 1998 թվականին ընդունված քրեական դատավարության երկու օրենսգրքերի, գործող օրենսգրքով քրեական դատավարությանը մասնակցող կամ վարույթին օժանդակող անձանց շրջանակը որոշակի փոփոխությունների է ենթարկվել, քանի որ այդ ցանկից բացակայում է մասնագետը:

20-րդ դարից սկսած՝ բոլոր ՀՀ քրեադատավարական կարգավորումներով փորձագետը հանդես է եկել որպես վարույթին օժանդակող անձ, ով պետք է լինի ձեռնհաս, վարույթի առարկայով չչափազորված և տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների և հմտությունների:

Գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսվել է փորձագետի նոր դատավարական գործառույթ և սահմանվել, որ փորձագետը օժանդակում է վարույթին նաև առանց հետազոտություն իրականացնելու գրավոր կարծիք տալով, ինչով էլ պայմանավորված՝ կարելի է փաստել, որ ապացուցման գործընթացում ներկայումս ընդլայնվել է նաև պաշտպանության կողմի դատավարական հնարավորությունները, քանի որ քրեական վարույթի ընթացքում նրանց հնարավորություն է ընձեռվել ստանալու առանձին ապացույց փորձագետի կարծիք:

АРТУР ЧАХОЯН – Историческое развитие статуса эксперта в Армении. – В статье был исследован статус эксперта и его историческое развитие от средневековья до наших дней, учитывая, что во все времена эксперты играли важную роль в процессе предотвращения, раскрытия и расследования преступлений, при содействии которых орган, осуществляющий производство, получал возможность получить доказательства, раскрывать обстоятельства, имеющие значение для дела.

С этой целью были изучены судебники Мхитара Гоша и Смбата Спарапета, «Каноническое законодательство» сына Давида Алавки, «Судебник армян Астрахани», созданный Егиазаром Григоряном, Григором Канпаняном и сыном Ованеса Саркисом, «Ловушка Славы» Шаамира Шаамиряна.

В статье были изучены, проанализированы и обобщены также положения, предусмотренные уголовно-процессуальным кодексом Армянской ССР, принятым 7 марта 1961 года, и уголовно-процессуальным кодексом РА, принятым 1 июля 1998 года, касающиеся статуса эксперта, правовые позиции кассационного суда РА относительно основных целей деятельности специалиста и эксперта.

В результате изучения правовых памятников Армении подтверждается, что и в Средние века суды отводили большую роль в деле расследования преступлений экспертам опытным и знающим свое дело лицам и применяемым ими знаниям.

Ключевые слова: наука, техника, знаток, опытный, осведомленный, специалист, эксперт, статус, судебник, специальные знания, способности

ARTUR CHAKHOYAN – *Historical Development of the Expert Status in Armenia.* – The article examines the genealogy of the expert and his status, historical development from the Middle Ages to the present day, given that at all times experts have played an important role in the process of preventing, uncovering and investigating crimes, with the assistance of which the body carrying out the proceedings was able to obtain evidence, disclose circumstances relevant to the case.

For this purpose, the judicial books of Mkhitar Gosh and Smbat Sparapet, the "canonical legislation" of David Alavka's son, the "Judicial Book of the Armenians of Astrakhan" created by Egiazar Grigoryan, Grigor Kanpanyan and Hovhannes' son Sarkis, the "trap of Glory" by Shaamir Shaamiryan were studied.

The article also studied, analyzed and summarized the provisions provided for by the Criminal Procedure Code of the Armenian SSR, adopted on March 7, 1961, and the Criminal Procedure Code of the Republic of Armenia, adopted on July 1, 1998, concerning the status of an expert, the legal positions of the Court of Cassation of the Republic of Armenia regarding the main objectives of the specialist and expert.

As a result of studying the legal monuments of Armenia, it is confirmed that even in the Middle Ages, the courts assigned a large role in investigating crimes to experts - "experienced", "knowledgeable" persons and the knowledge they applied.

Key words: *Science, technology, expert, experienced, knowledgeable, specialist, expert, status, book of judgments, special knowledge, abilities*